մեղրամոմ ունենալով։ Ասպարանքը ներս մանելիս, նոքա բերեցին հետերնին երկու սափոր գինի և մի մեծ սինի (ափսեայ) լի խնձորով, որոց մէջ տեղը տնկած էր մի վառած մեղրամոմ։ Նոքա մօտ երեք ժամ խօսում էին մեզ հետ իրանց կրօնի մասին և նորից խընդրեցին մեզ միջնորդել Խանի մօտ, որ թոյլ տայ նոցա վերջացնել իրանց վանքի շինութիւնը։ «Մենք խոստացանք և կատարեցինք»։

Ա. ԵՐԻՑԵԱՆՑ.

Պաղիանի վանքի դարուս սկզբներում շինութեան և դրութեան մասին տեղեկութիւն տուող Յովհաննէս ը. կաթուղիկոսի կոնդակի պատճէնը գրեալ 'ի 14 մայիսի 1836 ամի, համար 150, կարևոր համարեցի դնել այստեղ, որը տուեց ինձ նոյն իսկ կոնդակի մէջ յիշած Զամախեցի Դանիէլ քահանայի որդի Յովհաննէս բէկ Զահնշահեանցն, որ բնակվում է Սալիանում, և կոնդակն է ըստ այսմ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէս և շնորհիւ Նորա կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ Արարելական եկեղեցւոյ հայաստանեայց և սրբոյ Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Արժանապատիւ տէր Դանիէլ գործակալ Խաչակիր քահանայի։

'Ի վերադարձին այսր սրբազան Յովսէփայ Արք եպիսկոպոսի հարազատի մերոյ պատմեաց մեզ լիովին նա ինքն զժիրաժիր գործունէութիւն ձեր եւ զհարազատ ծառայութիւն Ձեր